

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրված են միմյանից խմբագրատան մէջ:

Ոտարարողը ցանկի վրայում են ուղղակի
Tiflis. Pechatka „Mianak“

ՄԵԼԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լիզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԿԱՎՈՒԹԻՒՆ

Ստորագրողի ինտելիգենցիա — և երբեք ուր
ուր չի եղել, նրան Անդրիեփուս սպանման գործը
նմանակ խմբագրին: Ներքին լուրերը — Ար-
տաքին տեսչութիւնը Սրբեկեան իր-
մեկից ինչպէս: «Մշակի» հեղագիրները, — Յայ-
տարարութիւնները: Բայց այս օրը կան ինչ
չանցանք Բերկին վեհաժողովէն:

ՍՏՐԿԱԶՈՐԻ ԻՆՏԵԼԻԳԵՆՏԻԱ

Ինչի առհասարակ ստորուկ
բառը արհամարհական նշանա-
կութիւն ունի: Որովհետեւ ստը-
րուկը իր դիրքով, իր զարգաց-
մամբ, իր ճշմարտութեամբ, իր դաս-
տիարակութեամբ՝ ստոր, կեղծա-
ւոր, դաւաճան, զգվելի և մի և
նոյն ժամանակ յանդուգն բնուե-
րութիւն ունի:

Այս հասարակութիւններ, ո-
րոնք դարձրելով ստորութեան մէջ
մնալուց յետոյ, երբ որ ստորու-
թեանից էլ ազատվում են, դեռ
երկար ժամանակ նրանց սերունդ-
ները պահում են ստորային ոգի:
Ինչքան էլ բարձր կրթութիւն
ստանայ այդ տեսակ ստորուկ, նա
միշտ, իր ամբողջ կեանքը ստորուկ

կը մնայ... Ստորութեան ոգին
մտել է նրա արիւնի մէջ:

Ստորուկ բնաւորութիւն ունե-
ցող մարդը երբ ձեզանից մի բան
է սպասում, նա ձեզ հետ հլու է,
կեղծաւոր է, զգվելի կերպով շո-
ղորթութիւն է: Բայց երբ նա տե-
սաւ թէ իր յոյսերը չիրագործվե-
ցան, նա իր սպասածը չը ստա-
ցաւ, — յանկարծ նա դառնում է
կոպիտ, համարձակ, անտանելի,
յանդուգն:

Դուք դաստիարակվել էք ա-
զատութեան և մարդիկների հետ
վարվելու մէջ հաւասարութեան
սկզբունքի վրա, դուք մոռանում
էք թէ ստորուկի հետ գործ ու-
նէք: Մինչև որ դուք քիչ բար-
ձրից էք նայում նրա վրա, ան-
մատչելի էք նրա համար, նա
ձեզ մի բարձր հեղինակութեան
պէս պաշտում է: Դուք այդ չէք
կամենում, դուք մոռենում էք
նրան, սկսում էք վարվել նրա
հետ բարեկամական ձևով, հա-
մեստ էք լինում, վարվում էք
նրա հետ որպէս հաւասար հա-

ւասարի հետ, մինչև անգամ ձեզ
այն աստիճան մոռանում էք, որ
խոստովանում էք նրան ձեր անձ-
նական հոգեկան թէ մտաւոր
պակասութիւնները, որովհետեւ ա-
մեն մարդ ունի պակասութիւններ:

Եւ հէնց որ ստորկային բնաւո-
րութիւն ունեցող մարդու առջև
դուք արեցիք այդ անզգոյշ քայլը,
— նա յանկարծ փոխվում է. նա
շողորթութիւն, հլու, կեղծաւոր մար-
դուց, սողուն կենդանուց դառ-
նում է վայրենի, յանդուգն, գա-
զան... նա էլ ոչինչ չափ ու սահ-
ման չը գիտէ: Դուք խոստովա-
նեցիք ձեր մի սխալը, — նա էլ
ոչինչ արժանաւորութիւն չի գտնի
ձեր մէջ. դուք ձեզ համեստ պա-
հեցիք, նրան ձեռք մեկնեցիք,
նրա հետ մարդկային յարգան-
քով վարվեցիք, — այդ նրան բա-
ւական է որ նա էլ ոչինչ պատիւ
չը ճանաչի ձեր մէջ, ձեզ անարգի,
ձեզ ցեխի մէջ գցի, ձեզ ոտնակոխ
անի:

Այսպէս է ամեն ստորկային
հասարակութիւնը, այսպէս է և

մեր հայ հասարակութիւնը և մեր
ինտելիգենցիայի մեծ մասը, որքան
նա բարձր ուսում կամ կրթութիւն
էլ ստանար...

Մի որ և իցէ հայ երիտասարդ
օտար երկրից, որտեղ նա ուսում
է ստացել, վերադառնում է իր
հայրենիքը: Այս այն երկրի սո-
վորութեամբ, որտեղ կրթութիւն
է ստացել, ամենքի հետ, մանա-
ւանդ երիտասարդութեան հետ
սիրալիր, մտերիմ կերպով է վար-
վում, վարվում է որպէս հաւա-
սար հաւասարի հետ: Անցնում են
ոչ թէ տարիներ, այլ միայն ամիս-
ներ, — և նա փոշմանվում է իր
վարմունքի մասին: Այս չը մտա-
ծեց որ ստորկային հետ գործ ունի:
Ստորկային հետ մտերիմ, մանա-
ւանդ համեստ լինելը — յանցանք
է. այդ կը նշանակի իրան ստո-
րացնել, անդունդի մէջ գցել: Այս
յետ է քաշվում այդ դառն փոր-
ձից յետոյ և սպասում է որ օտար
երկրից ուրիշ երիտասարդներ վե-
րադառնան, գուցէ նրանց հետ
կարելի է գործ ունենալ, գուցէ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԷ ԻՆՉ ԵՆԻՆԵՐ ՊԵՐԼԻՆԻ ՎԵՋԱՌՈՂՈՎ-
ՎԷՆ

(Գործ Միասն Զերադի)

Կ. Պոլս 1878

Գ.

«Վեհաժողով» յունիս 1-ին դումարվեցաւ
Բերկին մէջ, պաշտօն ունենալով սրբագրել Սան-
Ստեփանօի դաշնագիրը:

Տասներկուերորդ նիստին մէջ որ տեղի ու-
նեցաւ յունիս 22-ին, Անդրիս վեհաժողովին ներ-
կայացուց հայ խնդիրը: Այս այն բանակցու-
թիւնը որ տեղի ունեցաւ ազգային դատին նկատ-
մամբ:

«Լորդ Սալիգրիբի կառավարիչ յայնժամ զբա-
ղիլ Սան-Ստեփանօի դաշնագրի ժձ յօդուածովն,
որ Հայաստանի կը պատկանի: Վսեմափայլ լոր-
դըն պատրաստ է ընդունել այն յօդուածի երեք
յետին տեղերն ոյց չարժանիք են այն բարու-
գումներ և բարենորոգումներ զորս հայերն պիտի
ստանան, թէ վեհաժողովն հաւանի բառնալ ե-
րեք առաջին տողերն որք գուցէ ենթադրել տան
թէ առաջ գտնուին չը պիտի մեկնին մինչև որ
Բ. Գուռն չը շնորհէ այդ բարենորոգումները
Ապա թէ ոչ լորդ Սալիգրիբի հայերին համար
մի յատուկ յօդուած պիտի առաջարկէ ուրիշ ան-
գամ»

«Կոմս Եւստակիոս, չը պնդելով մի պայքարի
վրա ում այսօր պատրաստված չէ բնաւ, կը
վարէ օսական թէ մի գուցէ առաջ գտնուի
մեկնում, երբ խոստացված բարենորոգումներ հա-
տատուվին յառաջ տեղի ունենայ, ծանր շփոթ-
ներ պատճառէ: Նա կը խնդրէ յետաձգել ա-

մեն դիտողութիւն մինչև այն ժամանակ ուր վե-
հաժողովն աւելի կատարելապէս պիտի զբաղի
Հայաստանի խնդրովն»:

Տասնչորսերորդ նիստին մէջ, որ տեղի ունե-
ցաւ յունիս 24-ին, վեհաժողովն զբաղեցաւ հայ
խնդրովն: Այս այն բանակցութիւններ որք
տեղի ունեցան ժձ յօդուածին նկատմամբ:

«Օրակարգն կը պարունակէ այն խնդիրներ
որք ասիական երկրներին կը պատկանին: Սան-
Ստեփանօի դաշնագրին իւր ժձ, ժձ և ժձ
(հատուած Բ.) յօդուածներն մէջ նշանակած է
այդ խնդիրներ, Նախագահն (իշխան Պրիմալը)
կը կարծէ թէ պէտք է ժձ և ժձ յօդուածներն
միայն ընելի այսօր, ժձ յօդուածն, որ խօսու-
քաղաքին կը պատկանի, վերապահելով այն նիս-
տին ուր ներկայ պիտի լինի Մեքլուս-Խան»:

Լորդ Սալիգրիբի փափագին համաձայն, վե-
հաժողովն կորոյէ զբաղիլ նախ ժձ Բ յօդուա-
ծովն, որ Արդահանի և Կարսի կը պատկա-
նի»:

«Բարձր ժողովն կանցնի ժձ յօդուածին, որ կը
պատկանի հայերին և որ յիշատակված է ար-
դէն մի նախորդ նիստի մէջ»:

«Լորդ Սալիգրիբի այս նկատմամբ ներկայա-
ցուցած է մի առաջարկ, որ հաղորդված է լիա-
զօրեւորին: Վսեմափայլ լորդն կը խնդրէ որ բար-
ձրին ժձ յօդուածին առաջին տողերն մինչև
(այնպահանջներ)» բառն և կը ցանկայ յօդուածին
վրա յաւելիլ յետագայ պարբերութիւններն:

«Նա միւս վեց ստորագրող պետութիւններին
հետ համաձայն պիտի որոյնէ այսուհետեւ այդ
յանձնառումի սահմանն և այն միջոցներն որք հա-
կաւոր են որպէս զի դա գործադրվի»:

«Վսեմափայլ լորդն կը յաւելի թէ պէտք է
պաշտպանել հայերի շահերն և թէ իւր առա-
ջարկի նպատակն է թէ անմիջական բարուքու-
նեցի և թէ ապագայ առաջարկութիւններ յոյ-
սեր տալ նրանց»:

«Գարաթէնդօրի — բաշա կընդունի թէ, վերջին
պատերազմին մէջ, անհուած ցեղերն ծանր ան-

կարգութիւններ հանած են, այլ Գուռն, նրանց
տեղեկանալէ յետոյ, միջոցներ ձեռք առաւ
խնդիր որպէս զի վախճան տայ նոցա: Կերեի
թէ լորդ Սալիգրիբի առաջարկն ապագայ մի-
ջոցներ կախարկէ:

«Գարաթէնդօրի — բաշա կուզէ որ նկատառուին
այն տրամադրութիւններ զորս Գուռն ընդունած
է, և հատուածին վրա յաւելուին յետագայ բա-
ռերն: «Գուռն վեց պետութիւններին պիտի հա-
ղորդէ այն միջոցներն արդիւնն որք արդէն
ձեռք առուած են այս նկատմամբ» Այս յաւե-
լում թէ օսմանեան կառավարութիւնն կը գո-
հացունէ և թէ կամբողջացունէ այն գործածի
լիմաստն զոր անգլիական լիազօրներն կը ներ-
կայացնեն»:

«Կոմս Եւստակիոս կը նախընտրէ լորդ Սալիգ-
րիբի զրուածն, թէ Գուռն ձեռք առած է մի-
ջոցներ որք չեն գործադրված անօգուտ է յիշա-
տակել զայս»:

«Նախագահն զիտել կը տայ թէ գուցէ դժուար
է զսպական միջոցներ գործադրել անկախ ցեղերի
մէջ, և բարձրագագաւ իշխանն տարակուսելի
կը գտնէ այն յօդուածի գործնական ազդեցու-
թիւնն, զոր կառավարիչ լորդ Սալիգրիբի»:

«Գարաթէնդօրի — բաշա պնդելով այն յաւելումի
վրա զոր նշանակած է, լորդ Սալիգրիբի կը
խնդրէ յետաձգել պայքարն որպէս զի փոփոխէ
նախնական բնագիւնը»:

«Խնդիրն կը թողուի մի ժողովուրդ նիստի»:

«Տասնինգերորդ նիստին մէջ, որ տեղի ու-
նեցաւ յունիս 26-ին, հայ խնդիրն ներկայացաւ
վեհաժողովին: Այս ատենագիրն զոր կը թարգ-
մանեմ»:

«Նախագահն օրակարգի յաջորդ կէտին կանց-
նի և զիտել կը տայ թէ լորդ Սալիգրիբի յան-
ձն առած է բարձր ժողովին հաղորդել արդիւնն
այն համաձայնումի զոր պիտի ունենար օսմա-
նեան լիազօրներին հետ ժձ յօդուածի խմբագ-
րումին նկատմամբ, որ հայերին կը պատկանի»:
«Լորդ Սալիգրիբի կը կարգայ այն յօդուած

զոր համաձայն խմբագրած են բրիտանական և
թուրք լիազօրներն»:

«Բարձրագոյն Գուռն յանձն կառնու անյա-
պաղ իրացունել այն բարեփոխումներ և բարենո-
րոգումներ զորս կը պահանջեն տեղական պէտ-
քերն հայերէ բնակված նահանգներին մէջ և և-
բաշալատելով նոցա տպահովութիւն Գուռնի
և Չէրքէսներին դէմ: Նա այս նպատակի համար
ձեռք առուած միջոցներն պարբերապէս պիտի
ծանօթացունէ պետութիւններին, որք պիտի
հսկեն նրանց վրա»:

«Վեհաժողովն իւր հաւանութիւն կը տայ այս
յօդուածին»:

«Տասնութերորդ նիստին մէջ, որ տեղի ունեցաւ
յունիս 29-ին ֆրանսիական երրորդ լիազօրն
մասնաւորապէս կարգաց նոր դաշնագրին: Ատե-
նագիրն կը պարունակէ յետագայ տողերն, որք
մեզ կը պատկանեն»:

«Այն հատուածներն ընթերցումէն յետոյ որք
խօսուրի և հայերին կը պատկանեն, ձեական
զիտողութիւններ միայն տեղի ունեցան նրանց
դէմ»:

Գ.

Այս այն բոլորը ինչ որ արաւ եւրօպական
զիւանագիտութիւնը՝ յօդուած հայերի խնդր
բանակցութիւնների արդիւնք, իբրեւ սրբազան
պատրիարքի և պատգամաւորների անմիջական
արդասիք անա այս երկու յօդուածներն են, յօ-
դուածներ, որոնք գուցէ ապագայում ազգային
պատմական կենսի մէջ դարձնուին համարվին:
Մի համաձայնական տեսութիւն անելու համար,
կրկնեք այդ յօդուածները:

Ս. Ստեփանօյի դաշնագիր

«Յօդուած 16. Գանի որ, երբ առաջ գտնուին
մեկնին այն երկրներն զորս գրուած են Հայաս-
տանի մէջ և որք հաճկատանի պիտի թողուին,
կրնան տեղի ունենալ անդ կուրներ և խառնա-
կութիւններ որք խանգարեն լաւ յարաբերու-
թիւններն երկու աշխարհների, Բ. Գուռն յանձն
կառնու անյապաղ իրացունել այն բարեփոխում»

նրանք կորցրին ստրկային բնաւորութիւնը, գուցէ նրանք ճշմարիտ լուսաւորված դարձան....

Բայց դարձեալ դառն սխալ.... Ինչքան էլ ուսում առնի հայր, գոնէ հայի ներկայ սերունդը, նրա ընտանեկան դաստիարակութեան հետ միասին մտնում է նրա արիւնի մէջ ստրկային ոգին:

Եւ այդպիսով դառն փորձերից և սխալներից յետոյ, դուք ստիպված կը լինէք ձեր բնաւորութիւնը փոխել, դուք ակամայ, ձեր կամքի դէմ, ձեր հայրենիքում քանի մի տարի ապրելուց յետոյ, որքան էլ ռամկական զգացմունքներ ունենայիք, կը դառնաք հակառակ ձեր բնաւորութեան, ձեր ստացած դաստիարակութեան և կը թուփեան արիստոկրատ, հրապարտ մարդ, առանձնացած յետ քաշված կեանք վարող, սառնասիրտ, անտարբեր, ուրիշների վրա վերեւից նայող, ժամանակով գուցէ քարասիրտ, գուցէ և անսիրտ էակ դեպի ձեր հայրենակիցների ժամանակակից ստրկահոգի սեւրունդը....

Չեք հայրենակիցների ստրկական հասարակութիւնը դարձրեց ձեզ այն, ինչ որ դուք դարձաք և ինչ որ դուք երբեք չէիք դառնայ ուրիշ, աւելի լուսաւորված երկրում, մարդիկների և ոչ թէ ստրուկների մէջ ապրելով:

Ներքին և արտաքին գործեր կը պահանջեն տեղական պետքերն հայերէն բնակված նահանգներին մէջ և երաշխաւորել նրանց ապահովութիւնն Բիւրդերի և Չերքէսների դէմ:

Փետր. 18, ստորագրեցին՝ Ռուսաստան, Տաճկաստան:

Բերլինի կոնգրէսի դաշնագիր (Յուլի 61, Բ. Դուռն յանձն կառնու անյայտ իրացուցել այն բարեփոխումներ և բարեփոխումներ, զորս կը պահանջեն տեղական պետքերն հայերէն բնակված նահանգների մէջ և երաշխաւորել նրանց ապահովութիւնն Չերքէսների և Բիւրդերի դէմ: Նա այդ նպատակի համար ձեռք առնուած միջոցներն պարբերապէս պիտի ծանօթացնեն պետութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործարարութիւնը վրաս):

Յուլիս 1, ստորագրեցին. Գերմանիա, Աւստրո-Ունգարիա, Ռուսաստան, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Տաճկաստան:

Նոյն, որոնք գործը հարեանցի կերպով քննեն էին սկսեցին քարոզել թէ եւրոպական տէրութիւնները, որոնց թուում և Ռուսաստան, հայերի համար ոչինչ չեն օրոշել, այլ միայն Ս. Ստէֆանոյի դաշնագրութեան մէջ թաւանջեն և փոխել 16-ի տեղ 61 դնելով: Այդ կարծիքի սրժաւ լինելը հաստատուելու համար, համեմատեցեք երկու յօդուածները և խոր կերպով քննեցեք, ինչպէս անում է Չերքէսը:

1) Ս. Ստէֆանոյի յօդուածով, Ռուսաստան միայն պարտ կը գնէր Տաճկաստանի վրա հայ ժողովուրդին նկատմամբ. Բերլինի յօդուածով, Գերմանիա, Աւստրո Ունգարիա, Ֆրանսիա, Մեծ-Բրիտանիա, Իտալիա և Ռուսաստան միացան նոյն գործին համար:

2) Ս. Ստէֆանոյի յօդուածով, Բ. Դուռն յանձն կառնուր պաշտպանել հայերն անդ ուր բռնակած էին ռուս զուգորդն. այս խոստում Հայաստանի մի փոքր մասին համար էր, կարելի համար, և շատ դիւրին էր Տաճկաստանին կատարել զայն. մի ոստիկանական կարգադրու-

Դեռ լաւ է, եթէ բոլորովին չէք զգլի և չէք փախել ձեր հայրենիքից, այլ անտես առնելով բոլոր անարդանքները, խորին կերպով արհամարհելով ձեր ժամանակակից սերունդը, ձեզ կը նուիրէք նոյն ստրկական ժամանակակից հասարակութեան թարմ, դեռ այս րօպէիս ուսում առնող երիտասարդութեան կը թուփեան:

Մենք ստրկներից միայն դուրանով վրէժխնդիր կը լինենք, որ նրանց զաւակներից մարդիկ կը դարձնենք:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻՆԱ ԱՆԴՐԵԱՎՍԿՈՒ ՍՊԱՆՍԱՆ ԳՈՐԾԸ

Թիֆլիսի դատարանական պալատի նիստը 28-ին նոյեմբերի:

Նիստը բացվում է 11³/₄ ժամին առաւօտեան: Նիստի սկզբում շարունակվում է բրժկական էկզերսիզը:

Նոր էկզերսիզները վերջացում են իրանց ցուցումները, նախագահը առում է մենք վերջացրիք դատաստանական քննութիւնը, մեզ մնում է այժմ լսել կողմերի վեճաբանութիւնը:

Նիստի ընդմիջվուց յետոյ պրօկուրօրը սկսում է իր մեղադրական ճառը:

Նրեք պատճառներ կարող են լինել Նինա Անդրեւովնա մահվան, ասում է պրօկուրօրը կամ նա պատահմամբ խեղդվեցաւ ջրի մէջ, լողանալու ժամանակ, կամ նա դիմամբ խեղդվեցաւ, անձնասպանութիւն գործելով, կամ վերջապէս նա խեղդված է եղել ուրիշ

թիւն կը բաւէր որպէս զի տեղի չունենային «կռիւներ և խառնակութիւններ»: Բերլինի յօդուածով, Բ. Դուռն յանձն առաւ պաշտպանել հայերն անդ ուր բռնակած էին ռուս զուգորդն, ոչ ինչպէս որ Նինա Անդրեւովնա պատահմամբ խեղդվեցաւ ջրի մէջ, լողանալու ժամանակ, կամ նա դիմամբ խեղդվեցաւ, անձնասպանութիւն գործելով, կամ վերջապէս նա խեղդված է եղել ուրիշ

3) Ս. Ստէֆանոյի յօդուածով, Բ. Դուռն միայն Ռուսաստանին կը խոստանար պաշտպանել հայն Բիւրդերի և Չերքէսների դէմ: Բերլինի յօդուածով, Գերմանիա, Աւստրո-Ունգարիա, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Տաճկաստան պաշտպանել հայն Բիւրդերի և Չերքէսների դէմ. և պետք չէ մոռնալ թէ անդ է նաև Անգլիա, որի չանկերն կը պահանջեն որ գոհ լինին Հայաստանի քրիստոնեաներն, որպէս զի Եփրատեան հովիտն ուրիշներին որս չը լինի:

4) Ս. Ստէֆանոյի յօդուածով մէջ, մեր դատ ներկայացած էր անուղղակի. մեր ազգային իրաւունք չէր ներշնչած զայն, այլ ռուս բանակին դիպուածական ներկայութիւնն հայ հողին վրա:

5) Բերլինի վեճաբանութիւնը վճռեց թէ Բ. Դուռն պարտաւոր է եւրոպայի հաղորդել այն միջոցներ, զորս ձեռք պիտի առնու որպէս զի հայերն բարւոք, բարենորոգ և ապահով վիճակ ստանան: Ուրեմն մեզ համար պատասխանատու է Դուռնն այսուհետեւ. նա օսմանեան Հայաստանի համար համարադրու է եւրոպական աշխարհին: Եւր. Եւրոպա անբաւական զտնէ այդ միջոցներ, իրաւունք պիտի ունենայ պահանջել որ օսմանեան կառավարութիւնն ընդարձակէ զայն: Ահա մի բարեք որ չունի սահման:

Բերլինի վեճաբանութիւնը վճռեց թէ վեց պետութիւններն պարտաւոր են հսկել որպէս զի գործադրութիւնը այդ միջոցներ: Արդարև շատեր կըրնային առաւելել թէ Բ. Դուռն պիտի կարենար եւրոպայի հաղորդել և Ասիայի մէջ չը գործադրել

ձեռքով: Վերջին կարելութիւնը ընդունելով մի և նոյն է՝ արդեօք կենդանի չբուժեան մեջ գցած է եղել նա ջրի մէջ, թէ առաջ սպանված է եղել և դիակի ձեռով գցած է ջրէ: Նրկու դիպուածներուն էլ կը լինի մի տարբերակ՝ սպանութիւն: Անկարելի է, օրինակ, մտածել որ Նինա Անդրեւովնա պատահմամբ ընկաւ ջրի մէջ, կամ պատահմամբ նրան այնտեղ գցեցին, որովհետեւ նա նախ և առաջ հանված էր և յետոյ ջուրը էր գցած: Լողանալ այն հանգամանքներում, որոնք մեզ յայտնի են, անհնարին է: Անկարելի է լողանալ գիշեր ժամանակ, անցյալ տեղում, արագընթաց գետի մէջ, ինչպէս Կուր գետն է, այն էլ չիմանալով լող տալ այդ կը լինէր խեղդաբուժիւն, իսկ Անդրեւովնա օրիորդը մեզ յայտնի է ոչ թէ որպէս խեղդար, այլ որպէս մտածող, խորհող էակ: Պէտք է յիշել նոյնպէս որ նրան պակաս էին լողանալու համար ամեն պարագաները: Որ Նինա լողանում էր լուացքը չը հանած, այդ հնարաւոր է. այդ անում են կանանցից շատերը, բայց անկարելի է որ նա չը վերանայ իր հետ մի խոտակ ձեռք լուացք, չը վերանայ իր հետ գոնէ մի սրբիչ: Ներկայացնենք մեզ ի՞նչ կը լինէր նրա գրութիւնը, եթէ այդպէս լողանալուց յետոյ, նա վերադառնար տուն, իր վրայից թաց շապիկը գցելով, շորերը տկար մարմնի վրա հագած, այդպէս վազէր տուն, իր անձը փտանգի մէջ դնելով ճանապարհի վրա տան մէջ կենող մարդիկներից մինի պատահելու: Գուցէ աւելի հասանական է, որ օրիորդը անձնասպանութիւն գործեց, թէ և ինչ որ գիտենք նրա կեանքից իրաւունք չունենք մտածել, որ նա զգված էր կեանքից: Ընդհակառակն, նա վերջին ժամանակները սաստիկ զբաղված էր իր գործերի կառավարութեամբ, կամենում էր Թիֆլիսում գետին գնել նրա վրա առնն կառուցանել: Այն նամակը, որ Նինա Անդրեւովնա գրեց իշխան Նեքլաձեձին երկու ժամ իր մահից առաջ, կեանքի յոյսով լը է և այդ տեսակ նամակներ չեն գրում մարդիկ, որոնք պատրաստվում են մահվան:

բարեկարգական միջոցներ. այս կասկած փաբատուած է, զի վեց պետութիւններ յանձն առին հսկել: Ուրեմն Եւրոպա 1856-ի անմիջապէս կողմէն հեռանալով, իրաւունք ստացաւ միջամտել այսուհետեւ Հայաստանի նկատմամբ: Եւրոպայի վեճաբանութիւնը տասութեանը նիստին մէջ, գրեց. «Մերթ է պնդել թէ միջամտութիւն չը կայ բնաւ. Տաճկաստանի մէջ, երբ բազմաթիւ եւրոպական մասնախումբներ կան Ռումէլի մէջ, և այն: Ահա մի բարեք որ չունի սահման»:

Բերլինի վեճաբանութիւնը վճռեց թէ Բարձրագոյն Դուռն պարտաւոր է եւրոպային պարբերապէս հաղորդել այն միջոցներ որովք պիտի բարեկաւէ հայ տարրի կացութիւնը: Պարբերապէս և առանց կը յայտնէ թէ Բարձրագոյն Դուռն չը պիտի կարենայ բաւականապէս մի անգամ ձեռք առնուել հարկաւոր միջոցներն, այլ միշտ պիտի հարկաւորու բարենորոգումներ չորհել Հայաստանի, և, նորանոր բարենորոգումներ զի անհնար է որ մի զանգիւնի նոյն գրուածն հաղորդէ պարբերապէս: Ահա մի բարեք որ չունի սահման:

Այս համեմատական քննութիւնը ցոյց է տալիս այն մեծամեծ օգուտները, որ Ս. Ստէֆանոյի և Բերլինի դաշնագիրները, մասնաւոր վերջին, ընձեռեցին հայ ազգին: Որքան որ հնաւուր էր, որքան որ Եւրոպայի խառն և չիռթ դիպուածականութիւնը լինէր թոյլ էր տալիս, եւրոպական տէրութիւնները ցոյց տուին իրանց մարդասիրութիւնը հայերին: Կոնգրէսը հաւաքվել էր ոչ թէ Տաճկաստանի գոյութիւնը լուծելու, ոչ թէ նորան ոչնչացնելու, այլ նորան կործանումից ազատելու, և որքան որ Ռուսաստան կամ ուրիշ տէրութիւններ ջանացին հայերին ինքնավարութիւն տալ, այն հայերին, որոնք միայն գրող և խօսքով էին պաշտպանուած իրանց զատ, սակայն նոյն չէին կարող հայերի պատճառով մի նոր արեւմտեղ պատերազմի պատճառ դառնալ, որովհետեւ անշատե-

Այստեղ պրօկուրօրը երկար խօսում է այն հանգամանքների վրա, որոնք նրա կարծիքով անհնարին են անում ընդունել, թէ Նինա Անդրեւովնա մարմինը ընկած լինէր ջուրը իրանց տան առջև, որտեղ որ կարծում են թէ նա լողանալու է գնացել և ջրի երեսը դուրս եկած լինէր: Պարայազում Այդտեղից, նրա կարծիքով, երբեք մի դիակ ջրի հոսանքով ոչ թէ միայն այդպէս շուտ չէր հասնի Պարայազ, բայց և բոլորովին չէր հասնի Պարայազի շրջակայքը, մասնաւոր այդքան թարմ տեղ պահելով, ինչպէս նրան գտան ձկնորսները: Մեղադրողը կարծում է որ դիակը իր ընթացքում կը զիպչանայ թիւ արեւիքներին, որոնք պատահում են Կուր գետի մէջ և գետի մի քանի ճիւղերում բոլորովին էլ չէր անցնի, որովհետեւ ջուրը Կուր գետի ճիւղաւորութիւններից մի քանիսի միջ մասնաւոր ամուր, ունի միայն չորս թէ հինգ վերջով խորութիւն: Բացի օրորանից Անդրեւովնա սկիւնների տան առջև, որտեղ օրիորդը պէտք է լողանար, ջրի մի սաստիկ պոյոյտ կայ, որ չէր թողնի դիակը ընթանալու, թէ և օրիորդը խեղդված էլ լինէր: Ուրեմն պէտք է ընդունել այդ տեսակ անմիա բան՝ այն է, որ օրիորդը թէ և հանվեց իրանց տան առջև, բայց ջուրը ընկաւ լողանալու համար մի քանի վերստ հեռու այն տանից:

Սորանից յետոյ պրօկուրօրը երկար խօսում է էկզերսիզի վրա, մի կողմից յիշելով որ խոշորացողով արած հետազոտութիւնները ապացուցին, որ օրիորդի կողմների տակերի վրա չը կան ջրային բոյսերի հետքեր, ուրեմն նա չէ իջել նեղ շաւիղով դէպի գետը, երկրորդ որ էկզերսիզները թէ և մասնաւորութիւնների մէջ միմեանց հակառակելով, գրեթէ բոլորն էլ հասան այն եզրակացութեան, որ Նինա Անդրեւովնա գետ կեանքի ժամանակ ենթարկվեցաւ այս կամ այն Ֆիզիկական բռնութեան, ուրեմն նրա մահը մտադրված և բռնի մահ էր:

Բոլոր մեղադրվածները թաւով հինգ էին երեքը այստեղ են և նրանք հերքում են սպանութեան իրողութիւնը, իսկ երկուսը,

ով Հայաստանը Տաճկաստանից, այս վերջինից խաւած կը լինէին իր միակ նեցուկը և յոյսը, պարզ ասենք, ոչնչացած կը լինէին Տաճկաստանի գոյութիւնը, իսկ սա ընդդէմ էր Անգլիայի չանկերին: Մենք համոզված ենք որ Անգլիան ևս միւս տէրութիւնների հետ հայերին լաւութիւն էր ցանկանում, ինչպէս մի մասնաւոր տեսակցութեան մէջ օրը Սալդիբուրի ասել էր հայ պատգամաւորներին: «Հաւատացե՛ք թէ վեհափառ թագուհին ձեզ չպի կը ցանկայ որ հայերն գոհացուցի վիճակ ստանան, վայելելով բարեկեցութիւն, խաղաղութիւն և ազատութիւն»:

Եւ այսպէս Եւրոպան չորհել Հայաստանին այն, ինչ որ կարող էր չորհել և գուցէ աւելի ևս: Սրբազան պատրիարքը և հայ պատգամաւորները *) աշխատեցին, որքան որ կարող էին աշխատել, ձեռք բերին ազգի համար, ինչ որ կարելի էր չը գոհուի և գրչով ձեռք բերել:

*) Չարմանալի չէ որ մի այսպիսի նշանաւոր և կենսական ազգային խնդրի մէջ Հայոց կաթողիկոսն անուր ոչ մի տեղ չէ յիշում և նա ոչ մի գեր չէ խաղաղ, ինչով պիտի արդարանայ լքվածից պատմութեան առաջ այդ տարօրինակ վարմունքի համար:

որոնք հաստատում էին սպանութեան իրողութիւնը՝ Կուրիձէ և Մգելաձէ վարձապետներն արդէն Նախքան թէ և նոյնպէս իրանց մեղաւոր չէին համարում, բայց պնդում էին որ պատահմամբ ակամատեան էին ինչպէս ուրիշ անձինք սպանում էին Անդրիւսիսի օրիորդին։ Նահանգական դատարանը ոչինչ նշանակութիւն չը տուց Կուրիձէ և Մգելաձէ մեղադրվածներին վկայութիւններին, որովհետեւ, ինչպէս հաստատում էին, պոլցիցիական իշխանութիւնը խոստովանութիւն ստանալու համար դործ էր անում օրէնքով արգելված միջոցները, այն է խոստանում էր զանազան վարձատրութիւններ և փողեր ընդունելու պայմանով արգելի վարձաւերը, մի թէ դա ոչնչացնում է մեղադրվածներին խոստովանութեան իրողութիւնը։ Հասկանալի է որ մեղադրվածը հերքել իրան մեղադրող իր վարմանը մերկացնող մի իրողութիւն, հասկանալի է նոյնպէս երբ մեղադրվածը խոստովանում է մի փաստ, որ թէ և նրան մեղադրում է, բայց որ ճշմարիտ է, դուրսով մեղադրվածը կամենում է չը յարուցանել իր դէմ կասկածանքներ իր ստախոսութեան մասին, աշխատելով փոփոխել իրողութեան մանրամասները միայն յօգուտ իր անձին։ Բայց որ մեղադրվածը խոստովանելի մի չեղած և բացի սորանից իրան մեղադրող իրողութիւն, այդ անկարելի է և անհասկանալի է։

(Կը շարունակվի)

ՆԱԽԱԿ ԽՍՐԱԳՐԻՆ

Թիֆլիս 4 դեկտեմբերի

Պ. Զախար Դանդուրեանցի Իդրիբի ս. Սահակ եկեղեցուն նուիրեց մէկ արծաթեայ սկիւն, որ արժէ 80 ռ.։ Այդ մասին հարկաւոր եմ համարում բարեպաշտ պարոնին յայտնել իմ հրապարակական շնորհակալութիւնը։

Ընդ. Մենք, ազգի անհատներս, ինչ արինք, ինչ գործեցինք։ (Ինքնավարութիւն, ինքնավարութիւն) ակնից պոռոչ հայ ժողովուրդը յանկարծ և երբ Եւրոպան զլացաւ, նա ակնից մեղադրել պատրիարքին և իր պատգամաւորներին, առանց մտածելու, որ եթէ ինքնավարութիւն չստացաւ, դորա պատճառն ինքն էր, և ոչ մի ուրիշ։ Արդարադատ լինե՞ր պէտք մեզ, նոյնպիսի խոստովանութեանը քննե՞ր մեզ, ինչպէս քննում ենք ուրիշներին և հարցնենք (արդե՞ք հայ ժողովուրդը արժանի է իր ինքնավարութիւն ստանալու, ինքնուրոյն կեանք վարելու։ Ուր էին այն նշանները, այն ցոյցերը քո կեանքիդ մէջ, որոց հիման վրա կարողանայիր պահանջել քեզ համար այդ մեծ շնորհ։ Այս միտքը մենք դեռ Մշակի 177 համարում յայտնեցինք և մեծապէս ուրախ ենք, որ մեզ հետ ձայնակից է լինում այսօր պ. Զեւրազ ասելով. «Հայաստան իրաւունք ունէր ստանալ վարչական ինքնօրինութիւն, զոր Եւրոպա զլացաւ Կրետէի, կամ ընդունակ էինք մի ինքնօրէն կեանքի, մեք որ գիտակից ենք մեր վիճակի. դժբախտ ինչդրներ են, որովք չեմ ուզեր զբաղիւն։ Այլ կը փութամ յաւելել թէ Եւրոպա, վարչական ինքնօրինութիւն զլ առաւ լով մեզ, չնորձեց քակայն մի յօգուտ որ կրնայ աստիճանապէս տանիլ զմեզ ուր կը ցանկայինք հասնիլ, այսինքն վարչական ինքնօրինութեան»։

Կը նշանակէ ուրեմն որ այժմ իրենցից, հանկաստանի հայերիցն է կախված ապագայում այդ ինքնօրինութիւնը ձեռք բերելու. Բայց եթէ հայերը դարձեալ անհոգ կը շարունակեն առաջվայ կերպով ապրել, եթէ նոքա չեն աշխատի, չեն գործի ինչ որ պահանջում է ժամանակի ոգին և ուղղութիւնը, նոքա դարձեալ կը մնան նոյն ազգայնաբան ժողովուրդը, ինչպէս են այժմ. ինչ պիտի անի հայ ժողովուրդը, Գորան պատասխանելու համար, յառաջ բերենք Պ. Զեւրազի վերջին խելացի խօսքերը։

Ազգն պարտաւոր է այսուհետեւ բնութագրա-

թնդելով, պ. խմբագիր, տեղ տալ ձեր լրագրի մէջ իմ այս նամակին։

Ընդունեցէք և այլն,

Ստեփաննոս աւագ քահանայ Տէր Թովմասեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԻ

Կիրակի դեկտեմբերի 3-ին հայ դերասանական խումբը մի քանի օրոգներ ժամանակութեամբ ԹԻՖԼԻՍԻ Ներքինեան հին դպրոցի դահլիճում յօգուտ տ. Շամիրամի ներկայացրեց «Մէկի տեղ միւսը» հեղ. Գրիգորիսի, փոխ. պ. Սուքասանեանցի և «Պառաւանդուն խրատ», հեղ. հանգ. Մ. Տէր-Գրիգորեանցի։ Անտրակտում երգեր երգվեցան և մի քանի օտանաւորներ կարգացվեցան, որոնք հասարակութեան վրա շատ լաւ տրպաւորութիւն թողին. Զանգրախ էր միայն պ. Պապեանցի կարգացած «Ձկան գող» վէպը, որ ունի իր արժանաւորութիւնները, բայց թատրոնում կարգաւոր համար անյարմար է։ Ներկայացումն առհասարակ շատ լաւ գնաց։ «Պառաւանդուն խրատ» վոքովի սկսվելուց մինչև վերջը հասարակութիւնը ծիծաղում էր։ Պ. Սուքասանեանցի փոխարկած վոքովի բառական լաւ է և կարող է երկար ժամանակ մնալ հայոց թատրոնի բեմադրութեան մէջ։ Հասարակութիւնը ներկայացումից բառական մնաց։ Զանգրախ կը վնէր, որ պ. պ. Լալայեանց և Պապեանց մշտապէս մասնակցելին հայ ներկայացումներին։ Նոքա հայոց թատրոնի համար կարող են մեծ ոյժեր լինիլ։ Այդ ներկայացումից մենք բոլորովին գոհ եղանք։

ԷԶՄԻՆՆԻՅՈՒՄ մեզ հաղորդում են, որ այնտեղ վախճանվեցաւ վասակեանցը, որ շատ տարիներ վարել է ազգային պաշտօններ թէ ս. էջմիածնում և թէ ուրիշ հայաբնակ քաղաքներում։ Թաղման հանգէսը շատ չբեղ էր կատարված։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՐՈՒՄԵԼԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ

«Голосъ» լրագիրը իւր 313-համարի մէջ «Մարիցա» լրագրից քաղում է հետև-

կել իւր ճիգեր, որպէս զի կարենայ հասնիլ իւր նպատակին»։

«Եւրոպա իրաւունքներ տուաւ մեզ, այլ դժբախտաւ պիտի մնան, թէ չը կարենամք պաշտպանել զայն»։ Նա զէնքեր տուաւ մեզ, այլ դժբախտաւ պիտի հալկի թէ զանց առնումը գործածել զայն»։

«Ինչի՞նչ յօգուտով, բարձրագոյն Գրուռն յանձն առաւ անյապող բարեխաւ մեր վիճակ, Պէտք է աշխատել, երբ յապաղում տեղի ունենայ։ «Գրուռն յանձն առաւ իրացունել բարենորոգումներ Հայաստանի համար։ Պէտք է աշխատել, երբ դժբախտ չլրանան»։

«Գրուռն յանձն առաւ հոգալ տ և դա կ'ան պ է տ ք եր ն»։ Պէտք է աշխատել, երբ այդ պէտքեր ուրացուին կամ մասնապէս ընդունուին։

«Գրուռն յանձն առաւ բարենորոգումներ մուծել Հայերէ բնակութեան նահանգներ մէջ։ Պէտք է աշխատել, երբ մի հայաբնակ նահանգ դուրս ձգուի չըլանակէն»։

«Գրուռն յանձն առաւ պաշտպանել Հայն Զէր-գէսներին և Քուրդերին դէմ, Պէտք է աշխատել, երբ անպատիժ մնայ մի Զէրգէս կամ մի Քուրդ»։

«Գրուռն յանձն առաւ Եւրոպայի հաղորդել Հայաստանի բարենորոգումին համար ձեռք առնած միջոցներին։ Պէտք է աշխատել, երբ դժբախտ թուղթի վրա են միայն կամ չափազանցուած»։

«Գրուռն խոստացաւ հարկաւոր բարենորոգումներն, և պետութիւններն պիտի հսկեն որպէս զի այդ խոստում գործադրվի։ Պէտք է աշխատել, երբ նոքա չը հսկին կամ թերի կերպով հսկեն»։

«Վեհաժողովն լուռ մնաց երբ Շովարթի Եւրոպական մասնախումբը յիշատակեց Հայաստանի համար ալ. թէ Անգլիա չը բարեկարգէ հայ նահանգներն, այդ մասնախումբը հարկաւոր պիտի լինի մեզ, Պէտք է աշխատել, երբ Եւրոպա զլանայ մեզ զայն»։

«Մայիս 23-ի պայմանագրով, ասիական Տաճ-

վում ենք յայտնել մեծ պետութեան ներկայացուցիչներին մեր օրինաւոր ցանկութիւնները, հաստատոյց ունենալով, որ լուսաւորեալ Եւրոպան հոգում է մարդկութեան բարօրութեանը և քաղաքակրթութիւնը համար, ի նկատի կառնէ նրանց ամենաճշդ կերպով։

«Կատարեալ բաւականացած այն կազմակերպութեամբ, որը արդէն քանի ամիսներ է վայելում ենք, մենք մեծ անհանգստութեամբ ենք ընդունում որ և իցէ փոփոխութեան և նոյն իսկ միտքը, որ կարող է նպաստել վերահասարակ իրերի այն կարգին, որը արդէն այլեւս անչափ ներդրութիւններ թափեց այս թշուառ երկրի վրա»։

«Ուրեմն, բարձր եւրոպական յանձնաժողովի մեր քաղաքի մէջ գտնվելուց օգուտ քաղելով մենք աղերսում ենք նրան շնորհիւ ի նկատի առնել մի կողմանէ, երկրի ներկայ վիճակը, որ բարօրութիւններ է վայելում, արդար և բոլորից յարգված օրէնքների վրա հենված կառավարութիւններից, իսկ միւս կողմանէ նորա դառն և դժբաղդ անցեալը, խնդրում ենք յանձնաժողովին տալ մեզ մի կառավարութիւն, որ կարողանայ պահպանել մեր մէջ կարգ, հանգստութիւն և հաստատել մեր երջանկութիւնը ապագայում»։

«Կատարեալ վստահ, որ դուք կը բարեհաճէք ձեր բարեհաճ ուշադրութիւնը դարձնել ներկայ աղերսագրի վրա, պատիւ ունիմք մնալ ձեր գերազանցութեան խոնարհ ծառայք» (Ստորագրութիւններ)։

«Եւրոպայի արեւելեան Բոսնիայի հայ ազգաբնակիչները ներկայացրել է Ծիւղիւզի մէջ նստող միջազգային յանձնաժողովին»։

«Ձեր գերազանցութիւն։ Մենք արեւելեան Բոսնիայի հայ ազգի բնակիչներս, համարձակ-

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

1020Ի, 1/13 դեկտեմբերի։ Ջեյալաբադի իշխանաւորները և նշանաւոր մարդիկ եկան

կատանի քրիստոնէային խոստում առին Թագուհին և Սուլթանին որ լաւ վարչութիւն և պաշտպանութիւն վայելեն։ Պէտք է աշխատել, երբ Հայն գուրկ մնայ ի սոցանէ։

«Եւրոպա հաւաքապէս և Անգլիա անհատապէս գործ ունենայով Եւրոպայի հոլիտի մէջ, Անգլիա պիտի ջանայ պաշտպանել իւր շահ ամեն հակառակորդ շահի դէմ։ Պէտք է աշխատել ճարտարապէս, որպէս զի հայն, ճարակ տալով այս մրցումի, հիմնական օգուտներ քաղէ ի նմանէ։

«Պէտք է միաբան աշխատել հայ հայրենիքին մէջ, օտմանաւոր օտմանին մէջ, եւրոպական աշխարհին մէջ, մեր իրաւունք պահանջելով այն ազգերէ որք հայ խնդիրն ճանաչեցին պաշտօնապէս և դարեւ ի վեր մոռցուած հայ անունն անմահացուցին մի հանդիսաւոր զանազարի մէջ»։

«Կ. Պոլսի, մի տիրապետական կուռմի վրա աշխատելի և ձախաղովի ետութիւններն մարելով, աշխատել Հայաստանի և ձախով Եւրոպայի համար պարտաւոր է գործել այսուհետեւ, զի հարկէ մին քաղաքական կեանքի պարտաւորութիւնը ունի հրաւիրել մեր վրա ազգու միջոցներով»։

«Անհրաժեշտ է զորացունել Արարատեան ընդլուծութիւնն և իւր նմաններ, և վառ պահել այն յարաբերութիւններ, զորս առաջին հայ պատուիրակութիւնն հաստատեց Եւրոպական դահլիճին, ժողովուրդին և մամուլին հետ»։

«Ահա մի հսկայ և ընդուն գործ, ում պէտք է ձեռնարկել հաւատով»։

«Նոքա, որը վատութիւն կը սփռեն ազգին մէջ, Զէրգէսներէն և Քուրդերէն աւելի վնասակար կը լինին նմա, զի անյուսութիւնն, ամեն թուի անդամալուծելով, կրնայ սպանել մի ազգ»։

«Այլ ժողովուրդն, որ, ըստ Յիսուսի, նշան խնդրէ, կը հարցնէ մերթիւ։ Ուր է 61 յօդուածի գործնական արդիւնը։ Կը պատասխանեմ թէ, մեր յօդուածէ յառաջ, վախճուն յօդուածներ կան, մի թէ նոքա գործադրուեցան ամբողջապէս։ Նախ հորդներն պիտի առնուն իւրեանց բաժիններ, և ապա տկարներն ճիշ թափելով, դա է օրէնն աշխարհի։

Դակիա և հնազանդութիւն յայտնեցին անգլիացիներին, առաջարկելով դրանց իրանց ծառայութիւնները։

Ս. ՊԵՏԵՐՈՒԴ, 28 նոյեմբերի։ Մինիստրներն մասնաժողովի նիստից յետոյ, մասնաժողովին ներկայ անդամները իշխան Օլգեմբուրգեան, մինիստր Վալուեվ, Տոլսոյ, Նաբոկով, Պոսեյտ, Կրեյց, Լիսովսկի, Կրիստին, Սոլսկի, Կրեյս, Աբազա և Ուրուսով բոլորը միասին գնացին Տիւնազովի տունը, նրան իրանց յարգանքը յայտնելու համար։ Տիւնազով սաստիկ զթաշարվեցաւ։ Ներքին գործերի մինիստրութեան այժմեան կառավարիչ տայնի սովետիկ Մակով իր ամբողջ քաղաքական ասպարէզը կատարել է ներքին գործերի մինիստրութեան մէջ աշխատելով, Ի. Յ. Սոլովիեվի հետ կառուածների մասում և Մուրավիեվի հետ վիճաբան, ճորտերի գործերի մասին Մակով Վալուեվի ժամանակ նշանակվեցաւ ներքին գործերի մինիստրի դիւանատան կառավարիչ, իսկ 1876 թ. նշանակվեցաւ մինիստրի օգնական։

ԴԱՐՄԵՏԱՏ, 2/14 դեկտեմբերի։ Այսօր առաւօտ վախճանվեցաւ մեծ դքսուհին։

ՀՈՍՄ, 2/14 դեկտեմբերի։ Թագաւորը ընդունեց մինիստրութեան հրաժարականը։

Ս. ՊԵՏԵՐՈՒԴ, 1 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսաւր առաջին շրջանի արժէ 96 ռ. 25 կ., երկրորդ 95 ռ., երրորդ 95 ռ. 25 կ., չորրորդ 95 ռ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսաւր արժէ 237 ռ. 5 կ., երկրորդ 232 ռ., արեւելեան առաջին փոխառութեան 92 ռ. 25 կ., երկրորդ 91 ռ. 25 կ., ոսկի 8 ռ. 47 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 23,37 պէսա, Ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա 190,25 մարկ, Փարիզի վրա 245 ֆրանկ 10 սանտիմ։ Տրամադրութիւնը հաստատ է։

«Որպէս զի մարմնանայ 61 յօդուածն, ամեն անհատ պարտաւոր է գործողութիւններ յանձն առնուլ։ Ուր են դժբախտ»։

«Ուրեմն, ոչ ոք իրաւունք չունի զանապառն ընկերին դէմ թող ամեն Հայ իւր անձի դէմ բողոք բառնայ»։

«Պերլինի վեհաժողովին մի ոսկէհանք շահեցանք, մեզ անկ է խիղախիլ և հանել ոսկի»։

2.

Վերջաբան.

Այժմ մի քանի խօսք ևս, իսկ ուր են և որոնք են մեր ուսանալիքիս արած գործողութիւնները, մենք, որ ապրելով մի բարեկարգ տէրութեան հովանաւորութեան ներքոյ, խաղաղ անվտանգ, երջանիկ, կարող էինք մեծապէս նուազանալ մեր եղբայրների վիճակը բարւոքելու։ Կամ դուք մի քանի մանէթ նուիրելով թշուառ պանդխտականներին, մենք մեր պարտաւորութիւնը կատարած ենք համարում. Մենք, որ օտարազգիներից պահանջում էինք մեր եղբայրներին օգնել, մենք ինչով օգնեցինք նրանց։ Ամբողջ Ռուսաստանի հայութիւնը ընտրեց իր մէջից մի ընդունակ անձ և ուղարկեց Եւրոպա կամ Ռուսաստան մամուլի միջոցով այդ երկիրներին ուշադրութիւնը հրաւիրել հայերի վրա։ Իսկ մեր ամենայն հայոց կաթուղիկուր ինչ աւաւ։ Մտածեց ի վիճակին մի քանի բարեհաճ բաւ և բարոյական հոգեորականներ ուղարկել թշուառ քաղաքացիներ ժողովուրդը մի թիւարելու, Աւետարանի քաղցր խօսքով նրանց սփոփելու։ Ահա հարցեր, որոնցից ոչ մինը չէ իրականացել, յամօթ մեր։

Թող այն երիտասարդ հայ ուսանողները, որոնք գտնվում են Եւրոպայում և Ռուսաստանում, մտածեն, խորհեն և գործեն, ինչպէս հարկաւոր է այժմ գործել, Զենթարկենք մեզ նախապիւնքի։ Sapienti sat.

